

Մանկության և Հասարակական
Երկարաթափերը

Յոյս

1200 թուփան
Հայաստանում 320 դրամ



**ԻՐԱՆԱՀԱՅ
ԱՆԴՐԱՆԻԿ
ԱՐՁԱԿԱԳԻՐԸ
ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԵԱՆ (1914-2012)**

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2** Վեհափառ Արամ Ա-ի այցը Իրան
- 4** Հայաստան՝ ընտրություններից յետոյ
- 4** 5-րդ ազգային ժողով. փաստեր-թւեր
Սուրեն Մուսայելեան
- 5** Նախագահական ընտրությունները
կանխորոշա՞ծ
Ջոն Դիւզ
- 6** Օսկանեանը դեմ է ՀՀ-ԲՀ կոալիցիային
Սիրանոյշ Գելորգեան
- 16** Երեւանի փակ շուկան
Մեդիամաքս
- 20** Լոյսը եւ նրա էությունը
Արման Տէր Ստեփանեան
- 22** Ժենիա Ներսիսեանը 10-ամեայ Օսկարի դերում
Լիլիթ Ամիրխանեան
- 24** Մարզանք
Արման Տէր Ստեփանեան
- 26** Ժամանց

Մշակութային եւ Հասարակական

Յոյս

Երկշաբաթաթերթ

6-րդ սարի, քիւ122, Մայիս 16, 2012,
1200 քուման
Հայաստանում 320 դրամ



- 8** **Իրանահայ անդրանիկ արձակագիրը**
- 8** Իրանահայ կեանքի անկեղծ վկան
Ազատ Մաթեան
- 9** Ժամանակագրություն
- 12** Մազանդարի մահը
Անդրանիկ Սարեան

Պ ա ր ս կ ե ր է ն ք ա ժ ի ն

- | | | |
|---|---|--|
| 2 Այս համարի հայերեն էջերում | 5 Պոլսի հակացեղասպառույթան յանձնախմբի նամակները հայ կրթնապետների | 12 Նկարիչներ՝ Ֆելիքս Եղիազարեան |
| 3 Գիրք՝ «Ռեզիդենտ» պատմավեպը պարսկերենով | 7 Հայերը Ե՞րբ եւ ինչպե՞ս են եկել Իրան | Եղջերուն
Յովհաննէս Թումանեան |
| 4 Վեհափառ Արամ Ա-ի այցը Իրան | 9 Հայ ժամանակակից | |

<p>Յոյս</p> <p>Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտոնատեր՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմեն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինե Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարվեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերեն բաժնի սրբագրիչ՝ Քարմեն Ազարեան</p> <p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Տէր Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քաթրին Եաղուբի</p>	<p>Հասցե՝ Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ 66495208</p> <p>hooy@inbox.com www.hooy.com</p>
---	---	--	---

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ ԱՅՅԸ ԻՐԱՆ



Երկուշաբթի, Մայիսի 7-ի առաւօտեան իրանահայ հաւատացեալ ու բարեպաշտ ժողովուրդը աղ ու հացով, խուռներամ շարքերով դիմաւորեց պաշտօնական, նաեւ հովապետական այցով Թեհրան ժամանած Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա վեհափառ Հայրապետին՝ Թեհրանի Ս. Սարգիս եկեղեցում:

Վեհափառ Հայրապետը եկեղեցու մուտքի մօտ օրհնեց դպրոցական աշակերտուհիու կողմից մատուցուող աղ ու հացը եւ ժողովրդի ծափողջոյնների ներքոյ, շքախմբի ուղեկցութեամբ մուտք գործեց եկեղեցի: Բարի գալստեան ողջոյնի խօսք ասաց Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանը, որին յաջորդեց Վեհափառ Հայրապետի ելոյթը. «Հայրապետական օրհնութեամբ, քրիստոնէական ջերմ սիրով եւ ազգային վառ ապրումներով ողջունում են մեր ժողովրդի սիրելի զաւակները: Ես յատուկ կերպով

կուզեմ ընդգծել սիրելի հայ, որովհետեւ մեր եկեղեցու համար, մեր ժողովրդի իւրաքանչիւր զաւակ սիրելի է: Մեր եկեղեցին խտրութիւն չի դնում իր զաւակների միջեւ, բոլոր անդամները, բոլոր զաւակները մեր ժողովրդի՝ պատկանում են մեր եկեղեցուն: Ճիշտ այս մօտեցումով, այս գիտակցութեամբ եւ այս նախանձախնդրութեամբ ես ուզում եմ սա պահին իմ հոգեկան անհուն ուրախութիւնը արտայայտել, տեսնելով մեր ժողովրդի զաւակները այստեղ Թեհրանի մէջ Աստծու այս տան մէջ, Աստծու հովանու ներքեւ, որպէս անդամները Մեր եկեղեցու»: Վեհափառ Հայրապետը ողջունեց Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանին, Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բաբգէն եպսկ. Չարեանին եւ Ատրպատականի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ Տ. Գրիգոր վրդ. Չիֆթջեանին, քահանայ հայրերին եւ երեք թեմերի ազգային իշխանութիւններին: Վե-

հափառ Հայրապետը կարեւորութեամբ արտայայտեց ազգին ծառայելու անհրաժաշտութեան մասին: Վեհափառ Հայրապետը ողջունեց նաեւ Հայաստանի Հանրապետութեան դեսպանին եւ աւելացրեց. «Հայաստանը մեր հզօրութեան կռուանն է: Մենք սփիւռքի մէջ երազեցինք՝ ազատ, անկախ Հայաստանի համար. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը ազատ ու անկախ Հայաստանի երազի, ձգտումի, պայքարի առաջապահ զինուորը դարձաւ եւ այսօր հազար փառք Աստծոյ մենք դարձեալ ունեցանք ազատ ու անկախ Հայաստան, պէտք է Հայաստանը պահենք հզօր, Հայաստանը աւելի պէտք է հզօրացնենք, մասնակից դարձնենք այն բոլոր ծրագրերին ու աշխատանքներին որոնց նպատակը Հայաստանի հզօրացումն է: Սփիւռքը պէտք է աւելի հզօրացնենք, որպէսզի սփիւռքի հզօրացումով Հայաստանը հզօրանայ եւ փոխադարձաբար, որովհետեւ ժողովուրդը



ԱՐԱՄ ՎԵՏԱՓԱՌԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Իրանի «Իսլամական միջազգային հաղորդակցութեան եւ մշակութային կենտրոնի կազմակերպութեան» հրաւերով, Մայիսի 7-ից, Սեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Ե.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառը գտնուում է Իրանում:

Թեհրանի հայոց թեմական խորհրդի կողմից հայերէն եւ

մէկ ազգ է, մէկ ամբողջութիւն է»: Վեհափառ Հայրապետը Իրանի մասին իր արտայայտութիւններում նշեց. «Իրանի Իսլ. Հանրապետութիւնը իր հոգեւոր ու քաղաքական պետական իշխանութեամբ զօրավիգ կը կանգնի մեր ժողովրդին, այս երկրին մէջ մենք վայելում ենք բոլոր տեսակի ազատութիւն, մենք մասնակցում ենք այս երկրի զարգացմանն ու բարգաւաճմանը նպաստող բոլոր տեսակի աշխատանքներին եւ այստեղի իշխանութիւնը մեր ժողովրդի դատին հետ է»: Վեհափառ Հայրապետը աւելացրեց. «Մեր եկեղեցին ազգային եկեղեցի է, ճիշտ է մեր եկեղեցին Աստուծոյ տունն է միաժամանակ ազգի տունն է, եկեղեցին այս շէնքը չէ, դուք էք եկեղեցին եւ ինձ համար

հոգեկան ուրախութեան աղբիւր է տեսնել մեր ժողովրդի զաւակները այսպէս եկեղեցու սրբազան կամարների ներքեւ: Եկեղեցին դուք էք, պիտի շնչաւորէք եկեղեցին»: Վեհափառ Հայրապետի շքախումբը եկեղեցու շրջափակում գտնուող Բիրաւոր նահատակների յուշարձանին ծաղկեպսակ դրեց եւ աղօթեց մէկ ու կէս միլիոն անմեղ նահատակների յիշատակին:

Օրւայ երկրորդ կէսին Վեհափառ Հայրապետի շքախումբն այցելեց Իրանի Իսլ. Հանրապետութեան հիմնադիր առաջնորդ հանգուցեալ էմամ Խոմէյնիի դամբարանը, յարգանքի տուրք մատուցեց նրա յիշատակին:

Աղբիւր՝ hamaynk.com



Թեհրանի Ս. Սարգիս
եկեղեցու մուտքին
տեղադրուած պաստառը

պարսկերէն լեզուներով պատրաստած բարի գալստեան պաստառներում, Արամ Ա Վեհափառը ներկայացել է, որպէս ԱՇԽԱՐՀԻ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԿՐՕՆԱՊԵՏ:

1995 թ.-ից, Արամ Վեհափառը վեց անգամ այցելել է Իրան եւ անէն անգամ՝ միմիայն պարսկերէնով այդ նոյն կոչումով է ներկայացել պարսիկ հանրութեանը եւ մամուլին, որը առաջացրել է իրանահայ հայկական միութիւնների եւ մամուլի դժգոհութիւնը:

ՀՅԴաշնակցութեան ազդեցութեան տակ աշխատող Թեհրանի թեմական խորհրդի առաջացրած շփոթի հետեւանքով, իրանական լրատւամիջոցները, Արամ Կաթողիկոսին ներկայացրել են, որպէս ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ:

Աղբիւր՝ iranahayer.com



ԸՆՏՐՈՒԹՒՒՆՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ



5-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ՓԱՍՏԵՐ-ԹԻԵՐ

Սուրեն Մուսայելեան

Կիրակի (Մայիսի 6) համապետական ընտրությունների ժամանակ ընտրած Հայաստանի 5-րդ գումարման Ազգային ժողովի առաջին նստաշրջանը տեղի կունենայ Մայիսի վերջերին:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 68-րդ յօդածի՝ «Նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարում է պատգամաւորների ընդհանուր թւի առնւազն երկու երրորդի ընտրութիւնից յետոյ՝ երրորդ հինգշաբթի օրը»:

Կենտրոնական ընտրական յանձնաժողովի հրապարակած Մայիսի 6-ի ընտրությունների նախնական արդիւնքների համաձայն՝ 5 կուսակցութիւն եւ մէկ կուսակցութիւնների դաշինք յաղթա-



հարել են ընտրական շենը եւ մտել 131-տեղանոց խորհրդարան: Դրանք են՝ Հայաստանի Հանրապետական կուսակցութիւնը (ՀԻԿ)՝ 44,05% (663.066 ձայն), «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը (ԲՀԿ)՝ 30,20%

(454.684 ձայն), Հայ ազգային կոնգրեսը (ՀԱԿ)՝ 7,10% (106.910 ձայն), «Ժառանգութիւն» կուսակցութիւնը՝ 5,79% (87.095 ձայն), ՀՅԴ-ն՝ 5,73% (86.296 ձայն) եւ «Օրինաց երկիր» կուսակցութիւնը՝ 5,49% (82.690 ձայն): Համա-

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԿԱՆԽՈՐՈՇԻԱԾ

Ջոն Գիլզ
«ԱրմենիաՆաու»-ի խմբագիր

մասնական եւ մեծամասնական ընտրակարգով կուսակցութիւնների ներկայացուցիչների ձեռք բերած տեղերով գալիք Ազգային ժողովում 6 քաղաքական ուժերը խմբակցութիւններ կը կազմեն, հաւանաբար, հետեւեալ տեղաբաշխումով. ԶԳԿ՝ 69 տեղ, ԲԶԿ՝ 36, ԶԱԿ՝ 7, ՕԵԿ՝ 6, ԶՅԴ՝ 6, «Ժառանգութիւն»՝ 5: (Ընտրած պատգամաւորներից երկուսն անկուսակցական են:) Դաշնակցութիւնը ներկայացուածութեան առումով ամենամեծ պարտուողն է՝ 16-ամրամանոց խմբակցութիւնը փոքրացել եւ դարձել է 6-հոգանոց: ՕԵԿ-ը եւ «Ժառանգութիւնը» կորցրել են 2-ական տեղ: Մինչդեռ ԲԶԿ-ն խորհրդարանում 2007-2012 տարիների համեմատութեամբ ներկայացուածութեան աճ ունեցաւ՝ խմբակցութիւնն աւելացնելով 11 պատգամաւորով: ԶԳԿ-ն նոյնպէս աւելացրեց իր մանդատը չորսով: Զաշլի առնելով այն փաստը, որ ԶԳԿ-ն բացարձակ մեծամասնութիւն է ձեռք բերել խորհրդարանում (ըստ էութեան, քուրում ապահովելու եւ օրէնքներ անցկացնելու համար պահանջող յաւելեալ երեք մանդատ), նա կարող է իր կառավարութիւնը ձեւաւորել առանց այլ կուսակցական ուժերի եւ կոալիցիայի մասնակցութեան: ԶԳԿ-ն այս կապակցութեամբ դեռ յայտարարութիւն չի արել: Ընտրութիւնների նախնական արդիւնքների մասին շրջանառուող մէկ այլ հարց է, թէ արդեօք ԶԱԿ-ը, որը դժուարութեամբ յաղթահարեց ընտրական շենը եւ մտաւ խորհրդարան, կը վերցնի՞ մանդատները, թէ՞ կը նախընտրի բոյկոտել խորհրդարանի նստաշրջանները՝ պահպանելու ընդդիմադիր ուժի կեցածքը հանրահաւաքների տեսքով 2013 թ. Փետրուարին կայանալիք նախագահական ընտրութիւններին ընդառաջ: Կուսակցութիւնների արձագանքները շուտով լոյս կը սփռեն այս կամ այն հարցերի վրայ:



Հայաստանի հանրապետական կուսակցութիւնը բացարձակ իշխանութիւն ձեռք բերեց՝ Ազգային ժողովում ստանալով 69 տեղ: ԶԳԿ-ն՝ 69, միւսները միասին՝ 62: Սա դարձաւ 62 տոկոս մասնակցութիւն ապահոված ընտրութիւնների ամենաանսպասելի արդիւնքը:

Իրական կեանքում այս արդիւնքն անհաւանական է: Տնտեսական անկման հինգ տարիներից յետոյ Հայաստանի Հանրապետութիւնը միասնաբար վերընտրում է այն ղեկավարութեանը, որը գոյատեւելուց զատ ոչ մի առաջընթաց չկարողացաւ ապահովել, այն դէպքում, երբ Մեծ Բրիտանիայի վարչապետ Գորդոն Բրաունից սկսած մինչեւ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին «զլխատւեցին» իրենց երկրներում անցկացւած ընտրութիւններում՝ նոյն համաշխարհային տնտեսական ճգնաժամի համատեքստում: Այդ

ինչպէ՞ս: Ինչո՞վ է Հայաստանը տարբերում միւսներից: Պատասխաններից մէկը կարող է լինել համատարած վաճառած ձայների գործուն մեխանիզմը: Միւս հնարաւոր պատասխանն այն է, որ չկայ իշխող ռեժիմին հաւատ ներշնչող այլընտրանք: Թէ իրականում դա ինչպէս ստացւեց, կասեն գիտնականները մայիսվեցեան «դիախերձումից» յետոյ:

Պատահածի հետեւանքները պարզ կը դառնան գալիք ծնունդ նախագահական քարոզարշաւի «յղիութեան» շրջանում, որն այժմ սկսւել է: ԶԳԿ-ն այլեւս կոալիցիայի կարիք չունի: Ոչ էլ նոյնիսկ «ձեւական բնոյթի» կոալիցիայի, ինչպէս ասում է նախկին արտգործնախարարը՝ ներկայումս «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Գագիկ Ծառուկեանի համախոհը: Եթէ ԶԳԿ-ն Հայաստանում 2008 թ. նախագահական յետընտրական

պայթիւնավտանգ շրջանում ստիպւած էր բոլորի հետ «լաւ լինել» եւ պահել խաղի կանոնները, ապա այժմ խաղահրապարակն էլ իրենը, խաղալիքներն էլ, դարպասի բանալիներն էլ: Նախագահ Սերժ Սարգսեանի կուսակցութեանն են պատկանում բոլոր նախարարական պորտֆելները եւ փաստօրէն ԱԺ-ը՝ մանդատների բացարձակ մեծամասնութեան շնորհիւ, ուրեմն էլ ինչու միւս կուսակցութիւնները պէտք է իրենց ներդրութիւն տան, գան խորհրդարան՝ քւէարկելու վարչապետի առաջարկած որեւէ օրէնսդրական նախաձեռնութեան համար: Եթէ կիրակի անցկացւած ընտրութիւններից առաջ հակաՅՅԿ-ական տրամադրութիւնները կարելի էր որպէս «ընդդիմութիւն» որակել, ապա այժմ այն պարզապէս եւ վերջնականապէս կարելի է «անկարելոր» սահմանել: ՀԱԿ-ի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանն անապատում կանչողի ձայնից վերածուեց անտառում տապալւած ծառի, որի ձայնը ոչ ոք չլսեց: 14 կուսակցութիւններից բաղկացած ՀԱԿ դաշինքը մի կերպ յաղթահարեց խորհրդարան մտնելու համար անհրաժեշտ շեմը՝ ձայների 7 տոկոսը: Ըստ էութեան, դաշինքում ընդգրկւած կուսակցութիւններից իւրաքանչիւրը ստացել է կէս տոկոս ձայն, ինչը նշանակում է, որ դրանք առանձին-առանձին տասնապատիկ թոյլ են «Ժառանգութիւնից», որի առաջնորդի հասցէին Տէր-Պետրոսեանը մէկ տարի առաջ վիրաւորական արտայայտութիւն էր թոյլ տուել՝ անւանելով նրան ճշմարիտ ուղուց շեղւած: Կիրակի կայանալիք ընտրութիւններին ընդառաջ լայնօրէն շրջանառւում էր կարծիք, թէ ԲՀԿ-ին կը յաջողւէր սասանել ՀՀԿ մենաշնորհը: Սակայն եղաւ հակառակը, եւ այժմ, ինչ կանէի՞ք, եթէ Ծառուկեանի տեղը լինէիք: Նոյնիսկ Հայաստանում ամենաուժեղ մարդը (փոխա-

բերական կամ ժամանակին նոյնիսկ ուղղակի իմաստով) պէտք է իր տեղն իմանայ քաղաքական մեքենայի դէմ պայքարում եւ գիտակցի, որ վերջինս իր բազկի ուժին չի ենթարկւի: Իսկ Ծառուկեանի քաղաքական կնքահա՞յրը՝ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարեանը: Նա ընտրութիւններից մի քանի օր առաջ բացառիկ հարցազրոյց տուեց՝ գրգռելով վերլուծաբանների ախորժակը: Արդեօք նա կը մասնակցի՞ 2013-ի նախագահական ընտրութիւններին: Ի՞նչ տեղ կը զբաղեցնի Օսկանեանը, երբ Քոչարեանը վերադառնայ մեծ քաղաքականութիւն: Ինչ որոշումներ էլ կայացրած լինէին այս հարցերի ամնչութեամբ, դրանք իրականացնելը հաւանաբար ակելի բարդացաւ, երբ Կենտրոնական ընտրական յանձնաժողովը կիրակի երեկոյեան փակեց դռները եւ բացեց քւէատուփերը: Արդեօք կիրակի կայացած ընտրութիւնները Սերժ Սարգսեանին ժողովրդի հաւանութեան հանրաքւէ՞ էին: Իշխանութիւնը՝ գրպանում, անտարբերութիւնը՝ իր օգտին, կուսակիցներն էլ 10.000 դրամ ընտրակաշառքով ձայներ են գնում. որքանով է կարելոր հաւանութիւնը:

Ուրբաթ (Մայիսի11) Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ), «Բարգաւած Հայաստանի» (ԲՀԿ) եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (ՀՅԴ) կազմաւորած ընտրութիւնների վերահսկման միասնական շտաբը հանդէս եկաւ Մայիսի 6-ի խորհրդարանական ընտրութիւնների վերաբերեալ ամփոփիչ յայտարարութեամբ, որում խորհրդարան անցած ուժերը մասնաւորապէս արձանագրեցին, որ «ընտրութիւններն անցել են համատարած օրինախախտումներով»:

«Միասնական շտաբն արձանագրում է, որ Մայիսի 6-ին կայացած ԱԺ ընտրութիւնների արդիւնքում ձեւաւորւած խորհրդարանը չի արտացոլում ժողովրդի կողմից քաղաքական ուժերի աջակցութեան իրական պատկերը, յայտարարեցին երեք ուժերը՝ յաւելելով, որ իրենց համագործակցութիւնը կը շարունակի: - Ընտրութիւնների հանրային վերահսկողութեան միասնական



ՆԵԱՆԸ ԳԵՄ Է ԲՀԿ-ՀՀԿ ՀՆԱՐԱՒՈՐ ԿՈԱԼԻՅԻԱՅԻՆ, ԱԲԸ «ՀԱՍԱՏԱՐԱԾ ՕՐԻՆԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ» Է ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ

Սիրանոյշ Գեւորգեան

շտաբը շարունակելու է համատեղել ջանքերը երկրում ստեղծված արատաւոր ընտրական համակարգի վերափոխման եւ իրապէս ժողովրդավարական ընտրութիւնների մեխանիզմների հաստատման ուղղութեամբ», - ասւած է յայտարարութիւնում: Յայտարարութեանը հետեւեց Ճեպագրոյցը, որի ընթացքում ՀԱԿ-ի, ԲՀԿ-ի եւ ՀՅԴ-ի ներկայացուցիչներ, համապատասխանաբար, Լեւոն Ջուրաբեանը, Վարդան Օսկանեանը եւ Արմէն Ռուստամեանը պատասխանեցին լրագրողների հարցերին: Հայաստանի նախկին արտգործնախարար Օսկանեանը, մասնաւորապէս, անդրադառնալով ԲՀԿ-ի՝ ընտրութիւններում յաղթանակ տարած Հանրապետականի (ՀՀԿ) հետ մտրից կոալիցիա կազմելու հարցին, վերահաստատեց իր աւելի վաղ արած յայտարարութիւնը, որ ինքը կտրականապէս դէմ է «ոչ իրական կոալիցիա մտնելուն»: «Չեմ կարող խօսել կուսակցութեան անունից, քանի որ կուսակցութիւնում տարբեր կարծիքներ կան, եւ վերջնական որոշում դեռ չկայ»: Օսկանեանի խօսքով՝ ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկեանն այժմ լսում է տարբեր կարծիքներ՝ վերջնական որոշում կայացնելու համար: Յամենայնդէպս, Օսկանեանը շեշտեց, որ ինքն իրեն երբեք «ոչ իրական կոալիցիայի պայմանաւորաւորութիւնների պատասխանատուութեան տակ չի դնի»: Թէ արդեօք այս յայտարարութիւնը նշանակո՞ւմ է, որ ՀՀԿ-ԲՀԿ կոալիցիայի կազմաւորման դէպքում ինքը կը լքի ԲՀԿ-ն, որին ընտրութիւններից առաջ էր անդամագրուել, Օսկանեանը յաւելեալ մեկնաբանութիւններ չարեց՝



ասելով. «Եզրակացութիւններն ինքնուրոյն արեք»: Օսկանեանը նաեւ խօսեց իր նախագահական յաւակնութիւնների մասին: «Միշտ նոյն պատասխանն եմ տւել այդ հարցին եւ շարունակում եմ նոյնը տալ. ես չեմ մտածում այդ հարցի մասին, վաղ է այդ հարցի մասին մտածելը... Ոմանք այս պատասխանը մեկնաբանում են, որ ես չեմ բացառում, միւսները՝ որ բացառում եմ: Թուրք լրագրողները կարծեք թէ մեկնաբանել էին, որ բացառում եմ», - ասաց նա: ՀԱԿ-ի ներկայացուցիչ Ջուրաբեանն իր խօսքում յայտարարեց, որ Հայաստանում հերթական անգամ

կատարւել է պետական իշխանութեան ուզուրպացիա: «Հիմա մեզ հարցնում են, թէ այդ պարագայում ինչո՞ւ էք վերցրել ձեր մանդատները: Ազատ եւ արդար ընտրութիւնների պարագայում, իմ կարծիքով, ՀԱԿ-ը 50 մանդատից պակաս չէր վերցնի, ուրեմն մեզանից գողացել են 43 մանդատ: Մենք գնում ենք պառլամենտ մեզանից գողացւած այդ 43 մանդատը վերադարձնելու համար», - ասաց Ջուրաբեանը՝ յստակ ոչինչ չասելով, թէ արդեօք ՀԱԿ-ը շարունակելու է իր հանրահաւաքային պայքա՞րը, թէ՞ ոչ:

Աղբիւր՝ armenianow.com

Աժ ՄԱՅԻՍԻ 6-Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՐԳԻՒՆՔՆԵՐ

ՀՀԿ	69 տեղ
ԲՀԿ	36 տեղ
ՀԱԿ	7 տեղ
ՕԵԿ	6 տեղ
ՀՅԴ	6 տեղ
Ժառանգութիւն	5 տեղ

ԻՐԱՆԱՀԱՅ ԱՆԴՐԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԵԱՆ (1914-2012)

Իրանահայ գրող եւ հասարակական գործիչ Անդրանիկ Սարեանը 98 տարեկան հասակում կեանքին հրաժեշտ տւեց Մարտի 6-ին Կալիֆորնիայի Գլենդէլում, ուր արդէն 25 տարի էր, ինչ հաստատուել էր: Անդրանիկ Սարեանը չարմահայցի էր եւ հպարտանում էր իր իրանական ծագումով: Նա իրանահայ ամենալուրջ արձակագիրն է. գրում է, ոչ միայն արւեստի ու գրական գործեր յօրինելու համար, այլ՝ հասարակական խնդիրներ արծարծելու նապտակով, ինչպէս «Անլոյս քառուղիներում» յուշավէպում կամ անցեալը անհետացումից փրկելու միտումով, ինչպէս «Պատմութիւն Չարմահալ Գաւառի» աշխատութիւնում, ուր փորձում է արձանագրել իր ծննդավայրի կենցաղն ու ազգագրութիւնը: Սարեանը ակտիւ էր մինչեւ կեանքի վերջին օրերը: Երբ սկսեցինք «Հանդէս»-ի հրատարակութիւնը, նա մի նամակով ողջունում է նոր պարբերաթերթի հրատարակութիւնը եւ մանրամասն անդրադառնում է իրանական երեք թեմերի Էջմիածնից անջատման հարցին, որը նա դատապարտում է ամենախիստ բառերով: Իսկ երբ վերջին տարիներին հարցեր են առաջ գալիս Հնդկաստանի Մարդասիրական ճեմարանում, նա հարկ է զգում որպէս ճեմարանին լուսածափ անձնատրութիւն «Ազգ» օրաթերթում անդրադառնալ խնդրին: Մեր ընթերցողին հրաւիրում ենք կարդալ Ազատ Մաթեանի յօդածը արձակագրի մասին, միաժամանակ ընդունելով, որ Անդրանիկ Սարեանի ժառանգութիւնը կարօտ է աւելի մանրակրկիտ եւ քննադատական ուսումնասիրութեան:

ԻՐԱՆԱՀԱՅ ԿԵԱՆՔԻ ԱՆԿԵՂԾ ՎԿԱՆ

Ազատ Մաթեան

Այս տարւայ Մարտին Լոս Անջելոսում 98 տարեկան հասակում աշխարհին հրաժեշտ տւեց Անդրանիկ Սարեանը: Իր ֆիզիկական աւարտին հասաւ շուրջ մէկդարեայ մի կեանք, որի աշխարհագրական գլխաւոր հանգրւաններն են Իրանի Չարմահալ գաւառի Սինագան գիւղը, Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը, Իրանի նաֆթարդիւնաբերութեան երբեմնի մայրաքաղաք Աբադանը, Թեհրանը եւ իհարկէ վերջին հանգրւան Լոս Անջելսը:

Անդրանիկ Սարեանը մշակոյթի մարդ էր: Նրա հետաքրքրութեան սահմանների մէջ էին գտնուում պատմութիւնը, հասարակական կեանքը, գրականութիւնը, թատ-

րոնը, գեղանկարչութիւնը, սպորտը, բայց հիմնականում նա իրանահայ մշակութային կեանքում ճանաչում է որպէս արձակագիր:


Տւեալ պահին Ա. Սարեանի հրատարակած գործերից մեզ հասանելի են՝ «Պատմութիւն Չարմահալ Գաւառի» (1981), «Պատմւածքներ» Ա եւ Բ հատոր (1987), «Անլոյս քառուղիներում» (2002) եւ «Մեր Օրերի Մարգարէն» (2005): Հրատարակած են նաեւ «Հայկական Վագրը» (1986) եւ «Մեր Պղնձեայ Գայլը» (2002):

«Պատմութիւն Չարմահալ Գաւառի»-ն ցայժմ մնում է իր տեսակի մէջ միակ քիչ թէ շատ համապարփակ աշխատութիւնը Իրանի Սպահան նահանգի այս երբեմնի

ծաղկուն հայաբնակ գաւառի պատմութեան մասին: Աշխատութիւնը, բացի իր պատմական արժեքից, խօսում է հեղինակի իր ծագման ու ծննդավայրի հետ պահպանած հոգեկան կապի եւ իր ծագման նկատմամբ առանձին նախանձախնդրութեան մասին:

Հրատարակած գործերից էլ կարելի է տեսնել, որ բազմաժանր ու բազմաբնոյթ է Անդրանիկ Սարեանի գրական վաստակը: Հրատարակախօսութիւն, յուշագրութիւն, գրական քննադատութիւն, պատմւածք, վէպ: Նա իրանահայ կեանքի գեղարւեստական պատկերման լուսագոյն ներկայացուցիչներից մէկն է, իսկ արձակա-

ՄԻԿ ԱՐՁԱԿԱԳԻՐԸ



գիրների թիւը մեր համայնքում, ինչպէս գիտենք, մեծապէս զիջում է բանաստեղծներին: Եւ ընդհանուր առմամբ կարելի է ավստասանքով նշել, որ մեր բազմադարեայ համայնքը չի ստեղծել իր պատմութիւնն ու մանաւանդ կենցաղը մարմնաւորող արժեքաւոր գեղարւեստա-



- 1914 Ապրիլի 15
- 1923
- 1936
- 1946
- 1961-68
- 1981
- 1986

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԵԱՆԻ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ԺԱՍԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ծնել է Չարմահալի Սինեգան գիւղում Մեկնում է Հնդկաստան, սովորելու Կալկաթայի «Հայոց մարդասիրական ճեմարան»-ում

Վերադարձել է Իրան եւ գործի անցել Իրանի նախալին ընկերութիւնում

Ներգաղթի կազմակերպման յանձնախմբի անդամ

Նախալին ընկերութեան «Կերոն» անգլերէն շաբաթաթերթի վարիչ-խմբագիր

Աբադանում ակտիւ մասնակցութիւն մշակութային կեանքում, աշխատել է որպէս դպրոցների հոգաբարձութիւնների անդամ

Գրել է «Անի», «Շիրակ», «Նաւասարդ», «Ալիք» եւ «Հայրենիքի ձայն» թերթերում:

Պատմութիւն Չարմահալ Գաւառի հրատարակութիւն

«Հայկական վագրը» վէպի հրատարակութիւնը Բէլքոմ-քում

1987

Պատմաժքները (երկու հատոր) հրատարակում է Թեհրանում

1987

Հաստատում Գլենդելում

2000

Գլենդելում տօնում է նրա ծննդեան 85 ամեակը

2002

«Անլոյս քառուղիներում» եւ «Մեր պղնձեայ գայլը» գրքերի հրատարակութիւն

Գլենդելում աշխատակցել է «Նոր օր», «Նոր կեանք», «Մասիս», «Նոր Հայաստան» եւ «Առագաստ» հանդէսներին

2012 Մարտի 6-ին

Մահացաւ Գլենդելում



կան գործեր: Մենք այստեղ նշում ենք երեւոյթը, չխորանալով պատճառների վերլուծութեան մէջ, որը կարիք ունի առանձին լուրջ ուսումնասիրութեան: Այս տեսակետից էլ գնահատելի է Անդրանիկ Սարեանի կողմնորոշումը

իր գրաւօքներում իրանահայ կեանքի առանձին դրւագներ եւ մասնաւորապէս իր եւ իր սերնդակիցների կեանքը գեղարւեստօրէն

մարմնաւորելու փորձը: Գեղարւեստական արձակի (պատմաժք, վէպ, թատերախաղ) մէջ է, որ յաղթահարում է անէն ինչ ջնջող ու աներող ժամանակը, նրա միջնորդութեամբ է, որ շարունակում են ապրել մարդիկ, իրենց կենդանի խօսւածքով, իրենց մեծ ու փոքր յոյզերով ու մտորումներով, մի խօսքով իրենց անկրկնելի անհա-

տականութեամբ ու ճակատագրով:

Ընդամենը ութ-ինը տարեկան մանուկ Անդրանիկը գեղջուկ մանուկների 40 հոգանոց մի խմբի հետ կտրուում է հարազատ գիւղից ու ընտանիքից եւ ընկնում ամբողջովին խորթ ու անծանօթ մի միջավայր՝ Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը, որը եւ գծում է նրա եւ իր ընկերներից մեծ մասի ճակատագիրը, որպէս Իրանի նաֆթային ընկերութեան պաշտօնեաներ, դրան զուգահեռ նաեւ ազգային հասարակական, մշակութային գործիչներ: Այս մարդկանց պաշտօնական եւ իր ընդհանուր գծերի մէջ միակերպ կերպարի մասին տեղեկութիւններ կարելի է քաղել, եթէ դա իհարկէ կը հետաքրքրի որեւէ մէկին, հէնց պաշտօնական գրագրութիւնների ծալքերում, բայց թէ ինչպիսիք են եղել նրանք, որպէս իրական մարդիկ, որպէս նաֆթային հզօր աշխարհակալութեան մանր օբիեկտներ, ներկայացնել հնարաւոր է միայն գեղարուեստական արծակով: Անծամբ հանդիպած լինելով Կալկաթայի այս սերնդի անդամներից ոմանց, որոնք յաճախ անլանացի ներկայ են Սարեանի գրութիւնների մէջ, այդ թւում նաեւ իրեն՝ Անդրանիկ Սարեանին, կարող են ասել, թէ գրողը ի՞նչ լայնքով ու խորութեամբ է իր գրածներում վերարտադրել երիցս աքսորական այդ մարդկանց հարազատ պատկերը:

Անդրանիկ Սարեանը յուշագրող է եւ ոչ թէ վիպասան, եւ պատահական չէ, որ նա իր առաւել ծաւալուն գրածները անւանում է հէնց յուշավէպ: Սա նշանակում է, որ նրա գլխաւոր հերոսը ինքը հեղինակն է եւ նոյնիսկ այն պարագաներում, երբ նա փորձում է ներկայացնել այլ մարդկանց, դրանք պատկերուում են կամ բաւականին գունատ ուրուպատկերներով, կամ հեղինակի սուբիեկտիւ, յաճախ ռոմանտիկօրէն ուռճացած

դիմագծերով: Այնուամենայնիւ այդ մարդիկ կան Սարեանի եւ որ կարելուորն է, միայն նրա շարադրած էջերում: Ահա ամբողջ գաւառում հայ, թէ պարսիկ բնակչութեան սերն ու յարգանքը վայելող սազանդար Յարութունը, որը, եօթն օր-եօթ գիշեր պարսիկ խանի հարսանեաց հանդէսին նւագելուց յետոյ մահանում է, սգի մատնելով բոլորին: Քեռի Ջաւէնը, որ միայնակ հրաժարուում է համագիւղացիների հետ ներգաղթել Յայաստան եւ պարսիկ գիւղացիները նրան մահացած են գտնում իր հարազատների գերեզմանների վրայ: Եւ այսպէս բազմաթիւ դէմքեր ու անուններ, որոնք ցրած են Սարեանի էջերում, շուրջ մէկ-դարեայ ժամանակաշրջանի եւ առնուազն երեք գլխաւոր մայրցամաքների տարածքով մէկ: «Աննշան» մարդիկ, առանց որոնց, սակայն, ժամանակն ու աշխարհը կը մնայ ահաւոր կերպով դատարկ, եւ որոնց մասին մենք կարող ենք իմանալ միայն Սարեանի գրածների միջոցով: Ինքը՝ Սարեանը այսպէս հետեւեալ երկու պարբերութիւնների մէջ է փորձում սեղմել իրեն եւ իր ընկերներին վիճակած ճակատագիրը.

ՄԵՆՔ...

Մեր գեղջկական ծննդավայրի երազանքով անցաւ մեր մանկութեան օրերի մի սպանւած մասը եւ հեռաւոր հայրենիքի այրող կարօտով՝ գիտակից պատանեկութեան ամբողջ օրերը: Բայց ոչ մեր ծննդավայրին հասանք, ոչ հայրենիքին մեր հասունացած կեանքում: Ցիր ու ցան եղանք- մի մասը Լոնդոն, մի քանիսը Ամերիկա, մի քանիսը Աւստրալիա, մի քանիսը Թեհրան: Քանի-քանիսը մեռան դեռ պահելով իրենց բեռնաւորւած կեանքի մանուկ հոգիներում մանկութեան ու պատանեկութեան օրերի անկատար երազներն ու կարօտները:

Ապրողներիս մէջ դեռ տրոփում

է այդ վաղեմի երազը...

Եթէ ինձ մի երկրորդ կեանք ապրելու շնորհում արւի, ես կասեմ՝ թողէք պահեմ առաջին կեանքիս մանկութեան առաջին օրերը, բայց ջնջէք միւս մասն ու պատանեկութիւնս, եթէ դրանք կրկին պիտի անցնեն՝ Կալկաթայի Խէյրաթխանա բարեգործական տնում եւ Բենգալեան ջունգլիների Ս. Թովմաս մենաստանում... Նաեւ այն, որ այլեւս սովածութիւն չքաշեմ՝ Յայոց Մարդասիրական ճեմարանում, ի քաղաքս Կալկաթա, յերկիրս Յնդկաստանայ: Ամեն :

Սարեանի յուշավէպերից ամենատպաւորիչը, երեւի, հէնց «Անլոյս քառուղիներում» ստեղծագործութիւնն է, որտեղ նա պատմում է իր եւ իր ընկերների Յնդկաստան մուտքից մինչեւ ճեմարան ընդունւելը ընկած շուրջ մէկ եւ կէս տարւայ «Խէյրաթխանայում» եւ ապա բենգալեան ջունգլիներում գտնուող Ս. Յովհաննէս (թէ Թովմաս) եկեղեցու շրջափակում անցկացրած դաժան առօրեայի մասին: Հետաքրքրութեամբ են կարդացուում նաեւ հէնց ուսումնառութեան տարիների հետ կապւած պատմածքներն ու յուշագրութիւնները, որոնք անկասկած մնում են այս խորհրդաւոր կրթական հաստատութեան մասին եղած բացառիկ վկայութիւններ:

Բացի թեմատիկայից, որն ունի անկասկած ճանաչողական մեծ արժէք, գրողի անհատականութիւնը գնահատուում է լեզուի հանդէպ ունեցած վերաբերմունքով:

Սարեանը լաւապէս տիրապետում է արեւելահայ գրական աշխարհաբարին եւ այս տեսակետից էլ նա անկասկած իր սերնդի լաւագոյն իրանահայ ներկայացուցիչներից մէկն է: Սա առանձնապէս շեշտում ենք, որովհետեւ երեւոյթը այնքան էլ «բնական» չէ եւ, այսպէս, թէ այնպէս, գրական հայերէնը Յայաստանից դուրս

ապրողի համար անպայման մայրենի լեզու չէ: Բայց չէ՞ որ մեր գրական աշխարհաբարի երկու ճիւղերն էլ ձեւաւորել եւ ինքնահաստատել են Հայաստանի սահմաններից դուրս: Գուցէ հենց այդ է պատճառը, որ մինչեւ այսօր էլ գրական լեզուի եւ գեղարւեստական գրականութեան լեզուի խնդիրը մեզ մօտ մնում է չլուծւած:

Սարեանը տիրապետում է գրական արեւելահայերէնին եւ քիչ չեն այն էջերը, որտեղ նա այդ լեզուն օգտագործում է ստեղծագործաբար, այն ծառայեցնելով սեփական ասելիքին, բայց քիչ չեն նաեւ այն պարագաները, երբ տեղի է ունենում հակառակը, այսինքն՝ գրողն է տրուում լեզուի հմայքներին եւ փորձում ընթերցողին եւս բաժին հանել այդ լեզուական «գեղեցկութիւններից», ինչը, ոչ միայն կապ չունի ասելիքի հետ, այլեւ բառային, մանաւանդ բարդ ածականների, կուտակումով փորձում է լրացնել ասելիքի պակասը: Այլ խօսքով, խօսքի գեղարւեստականացման ճիգը յաճախ ոչ միայն չի օգնում գրողին, այլ ընդհակառակը խանգարում է:

«Գեղեցիկ, դաւարագեղ որթատունկ էր: Կեանքի յարատեւութեան զւարթաշուք վկան՝ իր մռայլաշունչ շրջապատում:

Մշտապէս կանաչ, կանաչութեամբ դաւար, թարմագեղ, հիւթեղ, ծիծողուն:

Որթատունկը սիրոյ մի թովիչ, մի թարմաշունչ անկիւն էր ներկայացնում նորահաս սիրահարների համար:

Շուտով մեր զրոյցը կտրուեց եւ մեր մտածումները խառնուեց որթատունկի հմայիչ դաւարութեան հետ:

Այս որթատունկը ամուլ էր, չբեր, անպտուղ. բայց տերեւները թաւիչ կանաչին էին տալիս, դաւարութիւն ու նրբագեղ թարմութիւն»:

Ինչպէս տեսնում ենք, ածա-

կանների այս առատութիւնն ու կրկնողութիւնը, այն էլ ընդամենը մէկ էջում չի համապատասխանում անհրաժեշտ չափի զգացումին:

Արծակի, յատկապէս ռեալիստական արծակի, կարեւորագոյն խնդիրներից մէկը հերոսներին խօսեցնելու խնդիրն է, նրանց լեզուական տիպականացումը: Սարեանին դա ամենաքիչն է յաջողւում: Գրեթէ բոլոր նման պարագաներում զգացումն է, որ խօսողը ինքը հեղինակն է, իսկ դա արտայայտուում է հենց լեզուի մէջ: Բարբառային տարրերը, որոնք կոչւած են ինքնութիւն ու ճշմարտացիութիւն հաղորդել պատմողի, թէ նրա հերոսի կերպարին, դժուար են մերում իրենց գրական միջավայրի հետ, ճիշտ այնպէս, ինչպէս իրենք՝ պատմողն ու իր հերոսներն են ողջ կեանքի ընթացքում դժուարացել մերել իրենց խորթ ու օտար շրջապատին: Դրա օրինակներն են. «սիրտը հուպ գալ», «աչքերը խփել» (փակել), «աչքերը կախ գցել» (հայեացքը խոնարհել), «աչքը առնել» (դիպչել, զարնել), «արիւն պայթել» (ցայտել), «ծիծաղը ետ պահել» (զսպել), դարձւածքային ձեւերը: Միսալը ոչ թէ այդ տարրերի օգտագործումն է, այլ՝ դրանց եւ, այսպէս կոչւած, զուտ գրական տարրերի միաձուլումը, ինչպէս դա տեսնում ենք Թումանեանի եւ Բակունցի մօտ:

Վաղ հասակում հեռանալով գիւղական միջավայրից, Սարեանը վատ է պահպանել իր գաւառական խօսւածքը եւ ամբողջովին սխալ է վերարտադրում այն իր հերոսների բերանով:

Այս բոլորով հանդերձ Ա.Սարեանի թողած գրական վաստակը, որի մեծ մասը ըստ երեւոյթին մնում է անտիպ, անկեղծ եւ արժէքաւոր մի վկայութիւն է իրանահայ մի քանի տասնամեակների վրայ տարածուող կեանքի մասին:

Մայիս 2012

Ժողովուրդը ծովի պէս բռնել ու ծփում էր Սազանդար Յարթունի շուրջը. քանի աչքը կտրում՝ մարդկային. բուրգ ու պատ էր տեսնում:

Հաջ Իլխան Սամսամի լայնատարած պատշգամբի կենտրոնում, փոքրիկ բոլորակ էր մնացել, որտեղ նրա կինը, քոյրերը, խնամիների աղջիկներն ու մօտիկ հարազատները, եօթն օրւայ հարսանիքի վերջին պարն էին պարում: Սազանդարը վերջին մուղամն էր փչում, որի մեղմօրէն ծորող հնչիւնների տակ, սարի կակաչների պէս օրօրում, ծածանում ու ալիք էին տալիս պարողների ուղղածիգ իրանները:

Սազանդարը իր կեանքի վերջին մուղամն էր փչում: Իսկ երբ աւարտեց ու խաղաղ հանդիսաւորութեամբ սազը ցած բերեց շրթներից, քունքներից ու ճակատից, առու-առու քրտինք էր ծորում: Աչքերը պահած թագաւորի մօր վրայ, ուզեց մի բան ասել, բայց շրթունքները չհնազանդեցին. գլուխը պտուտ եկաւ ու ներսում մի սառը հոսանք սկսեց շր-



ՍԱԶԱՆԳԱՐԻ ՄԱՅԸ

ՀԱՏԻՍ

Անդրանիկ Սարեան

ջան առնել: Շրթները դողացին:

- Տեղ տւէք նստեմ...

Նստեցրին ու թափւեցին գլխին:

- Ջուր բերէք... թան բերէք... ձայն տւին դէսից-դէմից:

- Օխտն օր ու օխտը գիշեր մեզ ուրախացրիր, ումրո՞ղ շատ ըլնի, ուստա...

- Էրթա՛ն որ կեանքումդ դուսա չունենա՛ս ու չիմանաս, ուստա՛...

- Մաջլէսների խա՛ն ու իլխան, ուստա Յարութուն...

- Քանի ումբր ունենաս՝ լուս ու պայծա՛ռ մնաս, ինչպէս լուս արիր մեր օխտն օրը, ուստա՛...

Սազանդարի աչքերը սեւանում էին. լուսը կտորատում, ցրում ու մթնում էր նրա առաջ. ուզում էր խօսել՝ չէր լինում. մի պաղ ժպիտ էր սառել թուխ դէմքին եւ այլեւս չէր հասկանում ինչ էր ա ն ց ն ու մ ,

դառնում իր շուրջը. սազը պահած կրօքին, պղտոր աչքերից գուլալ արցունք էր ծորում:

- Թէ որ ասենք դուշմանդ լա՛ դուշման չունես, ուստա ջան... լացը մեզի, ուրախութիւնը քեզի, ուստա ջան...

Գորովանքով սիրտը բացեց մի բարձրահասակ լռռ, դէս ու դէմ արաւ շրջապատողներին, սազանդարի գլուխը առաւ իր լայն թւերի մէջ, համբուրեց նրա թաց ճակատը, կնճռտած հայեացքով պրպտեց նրա դէմքը, յետոյ բարձրացնելով եւ թւերի օղակի մէջ պահելով, անդնդային ձայնով դիմեց իր բարեկամներին.

- Դէն գնացէ՛ք... գործ չունէ՛ք... Ձե՛զ եմ ասում, ճամբայ տւէ՛ք ներս տանենք... ուստան լաւ չի գգում...

- Վա՛յ հողը մեր գլխին...

- Վայ քոռանանք մենք... գրեթէ ճչացին մի քանի կանայք:

- Ասում եմ ճամբայ տւէ՛ք, ճամբայ տւէ՛ք... ու՞մ եմ ասում... Ձայնը բարձրացրեց եւ մի թւով դէս ու դէմ հրեց իր ու սազանդարի ճամբան բռնողներին:

Խանի կինը, հարսներն ու մի քանի ուրիշներ շփոթահար դմից ներս ընկան, օթախի յատակին փռեցին մեծամեծ հիւրերին վայել տեղաշորները, Սազանդար Յարթունին գուրգուրանքով երկարացրին, ծաղկաւուն երեսով մի փափուկ բարձ դրին գլխատակը եւ մի ծանր վերմակ քաշելով նրա վրայ, խնամքով ծածկեցին մինչեւ վիզը:

Սազանդարների վարպետ՝ Սազանդար Յարթունը իր կեանքի վերջին ժամերն էր ապրում: Իր վերջին մուղամի հետ, իր կեանքի վերջին արեւը մի պահ ծունկ տւեց գիւղը պարսպող սարի գլխին, բրոնզէ լուսով սահեց դաշտերի վրայով դէպի գիւղի կտուրները եւ մշուշ փռելով սարի դոշին, գլորւեց միւս կողմը: Գիւղի վրայ թւերը երկարեց աղջամուղջը, տներից ներս՝ մթութիւնը:

- Փիսուզը* վառել տուր, բաջի՛, ուստին լուս է հարկաւոր... ծանր ձայնով դիմեց խանի կնոջը, գիւղի ծերունիներից մէկը:

Փիսուզը վառեցին եւ մի քանիսը ծունկի եկան, մի քանիսը կանգնած մնացին սազանդարի շուրջը, աչքները յառած նրա գունատ դէմքին: Դրսում հաւաքւած ժողովուրդը գլուխ-գլխի շշմջում էր խօսում՝ նրա վիճակից մտահոգ: Սազանդարը մեռնում էր հայրենի գիւղից հեռու, բախտիարցի խաներից մէկի հիւրընկալ տնում: Մէջքի վրայ երկարած, գլուխը թաղած փափուկ բարձի մէջ, սառը հայեացքը մեխած մութ առաստաղին, ցուրտ լռութեան մէջ իր մտքերի մէջ ընկած՝ ման էր գալիս իր կեանքի ճամբէքով:

Նրա գլխի վերելում կանգնած ծերունի ջառռահի գլխի ազդանշանի վրայ, բոլորը անշշուկ դուրս գնացին. ինքն ու խանի կի-



նը մի ուրիշ ծածկոց էլ անելացրին սազանդարի ոտներին, խնամքով փաթաթեցին եւ քաշելով մի կողմ, սկսեցին փսփսուկով գրուցել:

- Ի՞նչ ես կարծում երբահիմ ամու... անհանգիստ վրայ բերեց բաջին:

- Սառը քրտինքը լաւ նշան չի, ամա կարող է փոխի...

Մինչեւ կէս գիշեր կը պարզի... ուզեց հանգստացնել ծերունին:

- Լուր տա՞նք, թէ չտա՞նք ընտանիքին...

- Տանք վնաս չունի. մարդ չի կարող ասի թէ ինչ կը պատահի:

- Տունս լուսաւորեց ու շէնացրեց, ափսոս էր... սիրտս մղկտում է... աչքերը լցւեցին ու ծանր հառաչեց բաջին:

- Եսպէս ուստա ոչ տեսել եմ, ո՛չ էլ կը տեսնեմ. չի՛ էլի, չի լինի... էլ սազանդար չկայ որ տեսած չլինեմ ըմբրումս. Սազանդար Արթունը ուրիշ է...

- Սարդար Ասադի հարսանիքին աշխարհ կիտել էր խանի դալէն: Օխտը սազանդար կա՛ր, ու կա՛ր Սազանդար Արթունը: Իլխանի ու Իլբէգի խաները մրցութիւն դրին օխտը սազանդարների ու ուստա Արթունի մէջ. մի բա՛ն էր, հա՛... օխտը հերթաբար փչեցին առաւօտից գիշեր, գիշերից առաւօտ ու ետ քաշեցին: Ուստա Արթունը սարի պէս կանգնեց ու մենակ փչեց՝ առաւօտից գիշեր, գիշերից առաւօտ բոլորի դէմ ու յաղթեց... լսած կը լինես. իմ աչքով եմ տեսել: Եղպէս բան ոչ էլել է՛, ոչ էլ կը լինի: Սազ ածել կայ, ածել էլ կայ, Ուստա Արթունի մուղամ բռնելն ուրիշ բան է. էդտեղ է, որ վզի ռազը կտրուեց, որ հիմա փչելիս՝ պարկի պէս ուռում ու նստում է վզի կաշին... Սրա սազի ձէնը հողեղէն չի, ուրիշ բան է. սրա սազից սրտի ձէն է գալիս, կեանքի քաղցրութիւն ու Աստու օրհնութիւն: Սրա սազի ձէնից մարդու ումբըրը էրգարում է ու համովանում:

Խանի հարսներից մէկը մի դե-

ռատի աղջկայ հետ սուերի պէս սահեց ներս կրակարանը ձեռքերին, տեղաւորեց կեսուրի ու ծերունու առաջ, թէյնիկը տեղաւորեց թէյ կրակի վրայ ու դուրս գնաց. իսկ աղջկը մի սփռոց բացեց նրանց առաջ, թէյի սպասը շարեց վրան ու ձեռները ծալելով կրծքին, խոնարհ կանգնեց մի կողմ:

Սազանդարների վարպետ Սազանդար Յարթունը՝ կեանքի վերջին ժամերն էր ապրում: Իսկ դեղնած հին բժշկարանը այսպէս էր բարբառում . -

Բժշկութիւն՝ վասն մարդու դողցնելուն- ճարճատուկի ռիշէն ջուր տան եւ ջուրը խմել տան հիւանդին կը լաւանայ:

Բժշկութիւն՝ վասն հիւանդի տաքութիւն- երեք մսխալ խիարի հունդ, երեք մսխալ ճերմակ շաքար, երեք մսխալ քասմի արմատ, երեք մսխալ քաուի սերմ ջուշ տան, խմի, տաքութիւնը կը կտրուի:

Բժշկութիւն՝ վասն մարդու սրտի խիստ ցաւալուն- սարի բացմանուկը եփել, ջուշ տալ ու խմել տան հիւանդին, կը լաւանայ:

Իմաստուն լռութիւնը ծանր չոքել էր մթաւուն օթախի մէջ եւ աչքերը չռել մեռնող Սազանդարը թեթեւ շարժում գործեց, աչքերը բացեց ու նայեց լռութեան սառը աչքերի մէջ:

- Թաշկինակս տւեք...

Ծերունի ջառռահը, որ անկիւնում քաշած խիարի հունդ, ճերմակ շաքար, քասմի արմատ ու քաուի սերմ էր հունցում, մօտեցաւ նրան, վերմակը թեթեւ բարձրացրեց, քաթանէ լայն գօտիկից դուրս քաշեց ոսկեգոյն ու ծաղկաւուն մի սրսմանէ թաշկինակ եւ խաղաղ հանդիսութեամբ տեղաւորեց նրա մատների մէջ: Սազանդարը բարակ ու երկար մատները քսեց թաշկինակի քնքշութեան, մի քանի մատնաչափ բարձրացրեց, պղտոր աչքերով

նայեց նրան ու ծփեց կոպերը:

...Ինքը քսանչորս-քսանհինգ տարեկան էր... Ամբողջ ծնունդ պահեցին Քոհգէլուի լեռնաբնակ գիւղերում: Հարսանիքի երրորդ օրը, հարսների ու աղջիկների մէջ յայտնեց սլացիկ բոյով սիրուն բաջի Նիլուֆարը: Ծափ ու շօքօշ կանչերի տակ, պտոյտ գործեց մէջտեղում, թեւերի տաքութիւնով հարբեցրեց օդը, կոտրատեց ձախ ու աջ, յետոյ շուռ գալով Սազանդար Յարթունի առաջ, սկսեց օրօրել ինչպէս դալար բարդին հովի ձեռքերում, աչքերի խուրձ-խուրձ պէտերը շաղ տալով նրա վրայ, գիրգ թեւերի օղակի մէջ առաւ գլուխը եւ այդ գառվառ թաշկինակը կապեց նրա վզով:

Յիշեց ու մի աննկատ ժպիտ բարակ գիծ քաշեց նրա դէմքի վրայ: Յիշեց ու իր մտքերը սկսեցին պայծառ գոյներ ստանալ. թաշկինակը նրան յիշեցրեց եւս մի ուրիշ թաշկինակի դէպք:

Հիմա երեսուն-երեսուներկու տարեկան էր. կին ուներ, երեխայ ուներ:

Փօլոօխտարի սարերում, մի մեծատան հարսանիքի երկրորդ գիշերը, երբ լուսինը նոր էր շուռ եկել սարի ետեւում եւ աքաղաղները սկսել էին աւետել գիշերւայ կիււելը, իրեն առաջնորդեցին մի հիւրասենեակ ու անկողին դրին: Յոգնութիւնը պատահած դէմ է կանգնում քնին: Կէս քուն, կէս արթուն երբ ման էր գալիս մտքերի հետ, զգաց որ դուռը անշշուկ բացւեց եւ մէկը մթութեան մէջ սահելով՝ հասաւ իր գլխավերելը, ծռւեց իր վրայ ու շշնջաց.

- Դօշաբով թան ու նռան ջուր եմ բերել համարդ, ուստա...

- Շնորհակալ եմ բաջի, զահմատ է...

- Որ գիշերը ծարաւ չմնաս...

- Որ ծարաւեմ, դուրս կու գամ, կը խմեմ...

- Ափսոս է դու ծարաւ մնաս, քիխա ու խան ուստա...

- Շէն մնաս բաջի:

- Դու շէն մնաս ու ծարաւ չմնաս, ուստա...

Սազանդարը զգում էր, որ բաջու շէնը կտրատուում էր ու նրանից տաքութեան մի հոսանք էր հալուում իր վրայ: Շտկուեց տեղում որ նրան մի բան ասէր, բայց բաջին ժամանակ չտուեց. ծունկ տուեց, փափուկ ու տաք մի թաշկինակ փաթաթեց իր վզով, թելերի մէջ առաւ նրա գլուխը, հուպ տուեց տաքութիւնից տքացող կրծքերին եւ շրթունքների բոցը քսելով նրա դէմքին, հեւաց.

- Սազիդ ձենով էրե՛լ ու կրակել էմ, ո՛ւստա...

Մի սառնաշունչ դող տքալով գալարուում էր Սազանդարի մարմնում. ատամները ցաւալու աստիճան կպել ու սղմում էին իրար. քթածակներից արագ-արագ փնչոց էր լսւում. կոպերի տակ պղտոր տաքութիւն էր լցւել: Սենեակում ու սենեակից դուրս, տիրում էր համատարած մի խաղաղ լռութիւն. սկստող գիշերը գլուխը դրած թելերի վրայ, անքթիս հսկում էր աշխարհից հեռացող Սազանդարին:

...ճարճատուկի ռիշէն ջուշ տան եւ ջուրը տան խմի երկու անգամ, դողն կը կտրուի:

Ծերունի ջառռահի ազդանշանի վրայ, երկու հոգի անձայն ներս մտան ու չոքեցին սազանդարի երկու կողմերում. յետոյ նրա քրտնած գլուխը հանդարտ բարձրացրին եւ ջառռահը մի թաս մօտեցնելով նրա շրթերին, մղկտաց.

- Ուստա՛, հոգուդ մատաղ, խմի՛ր, դողդ կանցնի...

Սազանդարը դժարութեամբ աչքերը բացեց, ու նայեց կէս մութ, կէս լուս աշխարհի աչքերի մէջ:

- Ուստա ջա՛ն...

- Ցած դէ՛ք... ատամների արանքից լսւեց նրա անդնդային ձայնը:

- Որ խմես ուստա ջան, Աստուած վկայ կանցնի՛...

Սազանդարի շրթերին մի հեզ-նախառն տխուր ժպիտ նկատուեց:

- Ուստա՛. դու աշխարհ տեսած մարդ ես...

- Գնալս էկել է... գործ չունէ՛ք հետս...

- Ուստա՛. դողը անցւորական է...

- Հալբաթ...Դող կայ կանցնի՛ կեանքը եղելու կը թողնի... Դող կայ կանցնի՛ էլ հետը կը տանի...

- Ի՛նչ ես ասում ուստա ջան, դու քանի միտ բերես, կեանքի լաւն ես ուզեցել ու աշխարհի լաւութեան հմար ես սազ ածել, հիմա քու հմար ես վաղ մտածում...

- Չեմ ասո՛ւմ, իմանո՛ւմ եմ... թողէ՛ք մի քիչ հանգստանամ:

Սազանդարի դողն անցել էր: Ալեխառն երկար մազերը փրփուրի պէս սառել էր ծաղկաբերս երկար բարձի վրայ ու սիրտը հանգիստ տրոփում էր: Ձեռքերից մէկը երկարել էր վերմակի վրայ, իսկ միւսում մի գառվառ թաշկինակ՝ ծալել էր կրծքի վրայ: Վզի աջ կողմի երակը սովորականից աւելի կապտաւում ու ուռուցիկ խաղաղ էր կեանքի վերջին կենդանութեամբ. Դանդաղ ու խաղաղ ինչպէս սառուց կապելուց առաջ օրհասական վերջին հոսանքն է ապրում սազանդարի հայրենական գիւղի բարակ աղբիւրը սառնաշունչ ձմռան օրերին: Ձմեռը կանցնի, ձիւները կը հալւեն եւ առուն նոր կեանքով կը կենդանանայ, բայց սազանդարի առաջ չոք է տւել յաւուրս յալիտենից ձմեռը...

Մեռնող վիճակում՝ սազանդարը կարծես քարացած արծանի մման լինէր, որ եթէ սազի ձէն լսելու լինէր, փակ աչքերը կը բանար, վերմակը շուռ կը տար իր վրայից, ոտքի կը բարձրանար եւ թաշկինակը ծածան տալով օդում՝ պար կը գար: Ինքը՝ որ իր ամբողջ կեանքում պարացրել էր ուրիշների, հիմա սրսմանի թաշկինակը մատների մէջ պահած, սպասում էր սազի ձէնի, բայց իր համար սազ ածող չկար:

Սենեակի անկիւնում, մի խոշոր մանդալի (կրակարանի) վրայ,

խանի հարսներից մէկը պատրաստում էր Սազանդար Յարթունի վերջին թէյը: Եռոցը մի անուշ ու հարազատ տոգոց էր բարձրացրել, որը ջերմութեամբ լցրել էր լուռ մթնոլորտը: Տոգոցից մի հիմ ու ծանօթ երգ էր ծորում, որը գալիս էր հեռու-հեռու տեղերից, որտեղից անցել էր սազանդարը յիսուն-վաթսուն տարով: Որտեղից սազանդարի խաղաղ ու իմաստուն կեանքի հետ, անցել էր լեռնական ժողովրդի խորհրդաւոր ու հեքիաթախառն կեանքի պատմութիւնը, աշխարհից կտրուած այդ բարձունքների վրայ:

Սազանդարի գլխավերելու կանգնած մնացել էին մի քանի մարդիկ, սառած հայեացքով, մթնած մտածումներով ու անհանգիստ սրտով:

Երբ մանկամարդ կինը եռոցի ջուրը դատարկում էր թէյնիկի մէջ, սազանդարի մութ ակնախոռոչներից երկու առկայծող լոյսեր կպան, շողեր ցրեցին աջ ու ձախ եւ նրա սառած շրթունքները կենդանացան: Մէկ-երկու հոգի կռացան նրա վրայ եւ իր աղջիկը, որ նոր էր տեղ հասել ուրիշների հետ, սահեց առաջ, ծունկ տուեց եւ իր տաք ձեռքերի մէջ առաւ հօր սառոյցէ ձեռքը:

Օթախի լռութիւնը պատռելով ներս խուժեց մի երեխայի լացի ձայն, մի հեռաւոր կանչ ու դարձեալ լռութիւնը ամբողջ հասակով կանգնեց ու թելերը երկարեց բոլորի վրայ:

- Ջուր տւէ՛ք... կարծես հեռուններից լսւեց սազանդարի մեղմ ձայնը:

- Ջու՞ր, թէ չա՞յ ուստա... գուրգուրալից հարց տուեց քեալանթար Աբգարը:

Սազանդարը աչքերը երկար պահեց պարապութեան մէջ, յետոյ մի երկար հոգոց հանեց.

- Չայ եմ ուզում, ամա ջուր տւէ՛ք...

...

ԵՐԵՎԱՆԻ ՓԱԿ ՀՈՒԿԱՆ՝ ԿԵՆԴՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՆՈՐՈՇ Է ՀՈՒԿԱՅԻ ԱՊԱԳԱՆ

Պատմում է ճարտարապետ Լույս Դուխանեանը՝

Նախկինում Փակ շուկայի տարածքում առևտրային հրապարակ էր 50-60 կրպակներով եւ սրճարաններով, կարելի էր անգամ ուղտերով քարաւաններ տեսնել:

Առևտրականները գալիս էին էջմիածնի ու Արարատեան մայրուղիներով: Հենց այդ հրապարակից սկիզբ էր առնում մի նեղիկ փողոց, որը կոչւում էր «Արմեանսկայա», հետագայում այն վերանանւեց Սունդուկեանի, իսկ յետոյ Թամանեանի շնորհիւ այն դարձաւ պողոտայ, որը կրում էր Ստալինի, ապա Լենինի, իսկ այսօր՝ Մաշտոցի անունը:

Հայրս քաղաքի գլխաւոր ինժեներն էր ու մասնակցել է Փակ շուկայի կառուցմանը:


Երբ աւարտեց Կիւեւան կամրջի կառուցման հերթական փուլը եւ հանւեց կողապատումը, որոշեցին օգտագործել այն նաեւ շուկայի կառուցման համար:

Սուտքի օրնամենտը երկրաչափական է եւ պարունակում է ազգային, ինչպէս նաեւ ֆլորայի եւ ֆաունայի տարրեր:

Շուկայի ներսում փոքրիկ շատրւանով ջրաւազան կար, եւ այնտեղ մանրադրամ զցելու աւանդոյթ էր առաջացել:

Պատմում է «Երեւաննախագիծ» ինստիտուտի տնօրէն Սուրէն Օհանեանը

Փակ շուկան պատկանում է յետպատերազմեան շրջանի կառույցների թւին, երբ շէնքերը կառուցւում էին յաղթանակած ժողովրդի ոճով, հարուստ դեկորացիաներով: Մինչեւ Խրուշչեուկեան ժամանակաշրջանը Երեւանում այդ ոճն էր գերիշխում եւ Աղաբա-



Երեւանի Փակ շուկան երէկ

բեանի նախագծած շատ կառույցներ համընկան այդ ժամանակաշրջանի հետ:

Փակ շուկան իր ճիսութեամբ, մետաղեայ ձուլածոյ օգտագոր-

ծելու տեսանկիւնից հարուստ եւ կապիտալ ներդրումների տեսակետից բաւականին թանկ գործ է:

Մայիսմէկեան տօնի օրերին մայրաքաղաքի աշխատաւորութիւնը կը ստանայ եւս մէկ նոր նւէր: Դա Ստալինեան պողոտայի

վրայ կառուցված շուկան է, որը գրաւում է հինգ հազար քառակուսի մետր տարածութիւն եւ երեսպատւած է վարդագոյն տու-

րում եւ վաճառարահի ներսում կառուցւած աստիճանները տա-

Երեւանի Փակ շուկան երէկ



Ֆով:

Շուկայի գլխաւոր մուտքի բարձրադիր կամարով երիզւած չուզումաձոյլ վիտրաժը կազմում է գեղեցիկ քանդակներից կերտւած մի ընդհանուր բրոնզապատ հիւսւածք:

Գլխաւոր մուտքի երկու կողմե-

նում են դէպի երկրորդ յարկը:

Հարիւր մետր երկարութիւն ունեցող գլխաւոր վաճառարահի կենտրոնում կառուցւած է ջրաւազան՝ շատրւանով:

Երեւանի Փակ շուկան այսօր

ճարտարապետօրէն ձեւաւորւած սրահի աջ ու ձախ կողմերը եզրափակող կամարաշարի խորութեամբ կառուցւած են արդիւնաբերական ապրանքների եւ գիւղատնտեսական մթերքների 34 խանութ ու կրպակ, որոնք ունեն բոլոր յարմարութիւնները կուլտուրական առեւտրի համար: Այդտեղ իրենց ապրանքները վաճառքի կը հանեն Հայառը, Երարդառը, Երսննդառը եւ առեւտրական այլ կազմակերպութիւններ: Կամարակապ բոլոր միջանցքներն ու սրահները ներսից զարդարւած են հայկական գեղանկարչութեան նուրբ նախշաքանդակներով:

Վեօրէն բարձր է սրահի կամարակապ առաստաղը, որն ունի 31 մետր լայնութիւն:

Պատմում է ճարտարապետ Լեւոն Իզիթեանը

Դա մի վայր էր, որտեղ բացի առեւտուր անելուց, մարդիկ հանդիպում էին իրար՝ կոնկրետ օրեր ունէին միասին շուկայ գնալու համար: Անգամ զանգահարում էին միմեանց, որ յիշեցնեն, թէ այսօր շուկայ գնալու օրն է: Մեր քաղաքի բնակիչների համար դա «համով» տեղ էր:

Վաճառողները մեզ ճանաչում էին: Անէն մի վաճառող իր յաճախորդն ունէր: Յիշում են, երբ ես մտնում էի շուկայ, ասում էին. էլի էն «հոտ քաշողը» եկաւ: Ես միշտ կանաչուց հոտ էի քաշում: Կանաչին ոչ թէ պէտք է ճմռես, որ հոտ գայ, այլ ինքնին պէտք է բուրաւետ լինի:

Այն ժամանակ անմիջապէս գիւղացին էր վաճառում իր ապրանքը, վերավաճառողներ գրեթէ չկային: Վաճառողները բարի էին: Եթէ հիւրեր էինք ունենում արտասահմանից, հպարտութեամբ ծանօթացնում էինք մեր շուկայի հետ:

Գրիգոր Աղաբաբեանը մեծ մարդ էր: Միշտ չի լինում, որ մեծ

ստեղծագործողը նաև մեծ մարդ է լինում: Նա փայլուն ճարտարապետ էր: Նա ոչ միայն շէնք էր կառուցել, այլև մթնոլորտ էր ստեղծել, գեղագիտական, տարածական, հոգեբանական: Բոլորը թաթախում էին այդ մթնոլորտի մէջ: Մարդիկ բարիանում էին, ես չեմ յիշում, որ այնտեղ ինչ-որ կռիւ, վէճ լինէր: Եթէ անգամ դրան շոյլը կար, կողքից մէկը միշտ ասում էր՝ քեզ հաւաքիր:

Այնտեղ ինչ-որ չափով իրականանում էր միասին ապրելու մեր երազանքը: Կապեր էին ստեղծւում, քաղաքային մի հիւսւածք էր ստեղծւում, որի մէջ Փակ շուկայի դերը շատ մեծ էր: Երբ ասում են՝ ճարտարապետութեան ազդեցութիւն, հէնց դա էր, մենք բոլորս միասին էինք: Դա մի գաղտնիք էր:


Շէնքը բարձր արժէք ունի եւ ճարտարապետական, եւ գեղագիտական: Այդ շէնքի հետ կատակներ անել չի կարելի: Համոզւած եմ, որ քաղաքային իշխանութիւնները եւ պետութիւնը ուշադիր կը լինեն այս հարցերում:

Պատմում է Տիգրան Լիլոյեանը

Գլխաւոր սրահը երիզող կամարաշարի խորութեամբ տեղադրւած են առետրական կազմակերպութիւններին յատկացւած 34 խանութներն ու կրպակները, որտեղ վաճառում են հրուշակեղէն, հացաբուլկեղէն, թարմ ու չորացւած մրգեր, խմիչքներ, ծխախոտ, մսի, բանջարեղէնի եւ ձկնեղէնի պահածոներ, հանքային ջրեր, զանազան օժանելիքներ եւ այլ արդիւնաբերական ապրանքներ: Գնորդները ամենուրեք հանդիպում են արդիւնաբերական եւ պարէնային ապրանքների առատութիւն:

Անորոշ ապագան

Երբ 20 տարի առաջ, 1992 թւականի Փետրուարին, պատմութեան մէջ առաջին անգամ Հայաստան այցելեց ԱՄՆ պետքարտու-



Նախկինում Փակ շուկայի տարածքում առետրային հրապարակ էր՝ 50-60 կրպակներով եւ սրճարաններով



ղար Ջէյմս Բէյքերը, նրան հրաւիրեցին այցելել նաև Երեւանի Փակ շուկան: Ամերիկեան դիւանագիտութեան ղեկավարը շուկայում անգամ առետուր արեց: Այսօր հիւրերին Փակ շուկայ այլեւս չենք տանում, աւելին՝ վստահ չենք, որ երբ այն նորից կը բացի իր դռները, այնտեղ որեւէ բան կը յիշեցնի հին միջավայրի մասին:

Սոյն թւականի Մարտի 2-ին տեղեկացանք, որ շինարարական աշխատանքներ են տարւում շուկայի տանիքում: Երեւանի քաղաքապետարանի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերի վարչութեան պետ Արթուր Գեւորգեանը մեզ ասաց հետեւեալը.

«Լուսանկարներից յստակ երևում է, որ վերականգնողական

աշխատանքներ են տարւում: Քաղաքապետարանը թոյլտութիւն է տւել սեփականատիրոջը հիմքերի ամրակայման եւ ներքին յարդարման աշխատանքների իրականացման համար: Իրականացւող աշխատանքների ընթացքում պարզւել է, որ տանիքի ծածկի խնդիր կայ, հիմա այն ամրակայում են»:

Սակայն երկու ժամ չանցած Արթուր Գեւորգեանի ղեկավարած վարչութիւնը հանդէս եկաւ ինքն իրեն հերքող հաղորդագրութեամբ.

««Փակ շուկայի» տարածքում իրականացւող քանդման աշխատանքների մասին ստացւած ահազանգի հետ կապւած, Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանը յանձնարարել է քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինութեան եւ հողի վե-



րահսկողութեան վարչութեան եւ հասարակական կարգի պահպանման վարչութեան պետերին անձամբ այցելել նշած վայր, ծանօթանալ իրավիճակին եւ ձեռնարկել համապատասխան քայլեր: Պարզել է, որ կառոյցի սեփականատէր «ԹԻՍ 1 շուկայ» ՍՊԸ-ն տարածքում կատարուող վերանորոգման աշխատանքների շրջանակում առանց համապատասխան թոյլտուութեան առկայութեան նախաձեռնել է շինութեան

տանիքի փայտաշէն հատածի փոխարինման աշխատանքներ: «Վարչական իրաւախախտումների վերաբերեալ» ՀՀ օրէնսգրքի 154-րդ յօդուածի առաջին մասով կազմուել է արձանագրութիւն՝ առանց թոյլտուութեան տանիքի ծածկի քանդման աշխատանքներ իրականացնելու համար: Աշխատանքները դադարեցած են, եւ տարածքը վերցած է խիստ հսկողութեան տակ»:

Սոյն թւականի Յունւարի 19-ին ՀՀ մշակոյթի նախարար Յասմիկ Պօղոսեանն ասել էր, որ Փակ շուկայի վերակառուցման վերգետնեայ որելէ նախագիծ դեռ չի ներկայացուել:

Նախարարի խօսքով, երբ կը ներկայացուի շուկայի վերակառուցման ծրագիրը, այն կը քննարկուի շահագրգիռ կողմերի



մասնակցութեամբ՝ օրէնքին համաձայն:

Աղբիւր՝ mediamax.am կայք

ԼՈՅՍԸ ԵՒ ՆՐԱ ԷՌԻԹԻՒՆԸ


Արման Տ.Ստեփանյան

Լոյսը եւ էլեկտրականութիւնը այսօր համարուում են 21-րդ դարուայ անբաժանելի մասերից մէկը: Մեր առօրեայ կեանքը, անկարելի է երեւակայել առանց լոյսի: Կարելի է ասել թէ մեր շրջապատում գտնուող ամէն ինչ մի կերպ կապակցուած է լոյսին: Սակայն ի՞նչ է լոյսը եւ ո՞րն է նրա էութիւնը: Այս հարցադրումներն այսօր գիտութեանը հետաքրքրող հիմնական միւթերից են:

Մարդը հին ժամանակներից նկատել էր, որ սաք անունով հանքային քարը իր կողմն է ձգում պապիրուսի թղթերը: Յետագայում յայտնաբերեց նման բազմաթիւ երեւոյթներ: Սակայն միայն 19-րդ դարում էր, ինչ գիտնականներին յաջողեց բացատրել այս երեւոյթը: Այն ժամանակ այս երեւոյթների պատճառը համարեց մի նոր իրականութիւն որը կոչուում էր էլեկտրականութիւն: Էլեկտրականութիւնը բացատրում էր թէ աշխարհում գոյութիւն ունեն երկու տեսակ էլեկտրական լիցք՝ դրական եւ բացասական: Ըստ էլեկտրականութեան երկու միատեսակ լիցքեր, երկու դրական կամ բացասական, իրար մօտենալիս վանում են միմեանց իսկ երկու տարբեր լիցքերը ձգում են իրար: Բնութեան երեւոյթներն ըստ իրենց էլեկտրական լիցքի լինում են դրական, բացասական եւ չեզոք: Այսպիսով էլեկտրոստատիկական կարողացաւ բացատրել հին ժամանակներից մարդուն հետաքրքրող հարցը: Գիտութեանը զուգընթաց նաեւ զարգացաւ էլեկտրականութեան գիտութիւնը եւ գիտնականներին յաջողեց էլեկտրոստատիկայի միջոցով հասնել էլեկտրական հոսանքների: Այսպիսով մինչեւ 19-րդ դարի կեսերը էլեկտրականութիւնը համարուում էր մարդու ամենամոտր եւ հետաքրքիր գիտութիւններից մէկը:

Էլեկտրականութիւնից բացի՝ այն ժամանակներում ֆիզիկոսներին հետաքրքրում էր բնութեան մի ուրիշ, շատ գեղեցիկ եւ խորհրդաւոր երեւոյթ: Յին դարերից Յունաստանի Մագնետիա քաղաքի բնակիչները գտել էին մի իւրայատուկ հանքային քար, որը ձգում էր երկաթից սարքուած իրերին: Այս

Սպիտակ լոյս



Բեկբեկուած սպիտակ լոյսի ճառագայթը

$$\oint \mathbf{E} \cdot d\mathbf{A} = \frac{q_{enc}}{\epsilon_0}$$

$$\oint \mathbf{B} \cdot d\mathbf{A} = 0$$

$$\oint \mathbf{E} \cdot d\mathbf{s} = -\frac{d\Phi_B}{dt}$$

$$\oint \mathbf{B} \cdot d\mathbf{s} = \mu_0 \epsilon_0 \frac{d\Phi_E}{dt} + \mu_0 i_{enc}$$

Մակսուելի 4 հաւասարութիւնները

երեւոյթները ուսումնասիրելով գիտնականներին յաջողել էր ձեւաւորել մի նոր գիտութիւն, որը կոչուում էր մագնիսականութիւն:

Թէ էլեկտրականութիւնը եւ թէ՛ մագնիսականութիւնը այն ժամանակւայ ֆիզիկայի տարբեր եւ իրարից բացարձակապէս առանձին ճիւղեր էին: Բայց հենց այդ ժամանակներում գիտնականները կարողացել էին ինչ-որ գաղտնի եւ ոչ երեւացող կապ յայտնաբերել էլեկտրականութեան եւ մագնիսականութեան միջեւ: Դրա վառ օրինակներից մէկը այն էր, որ էլեկտրական հոսանքին մօտեցւող կողմնացոյցի սլաքների ուղղութիւնը փոխուում էր: Անգլիացի յայտնի գիտնական Մայքլ Ֆարադէյը տասնեակ տարիներ շարունակ աշխատում էր թէ՛ էլեկտրականութեան եւ թէ՛ մագնիսականութեան վրայ: Նա պնդում էր թէ այս երկու երեւոյթներից մէկը օգտւելով կարելի է ստեղծել միւսը: Ֆարադէյը 15 տարի շարունակ ցանկանում էր ապացուցել աշխարհին իր տեսակէտները, սակայն նրա անբաւարար գիտելիքները մաթեմատիկայից խոչընդոտ էին հանդիսանում: Այս իրավիճակը տեսեց այնքան, մինչեւ մէկ այլ գիտնական նրա օգնութեանը հասաւ: Պրոֆեսոր Ջէյմզ Կլարկ Մակսուէլը հաւատում էր Ֆարադէյի խօսքերին, եւ ունենալով բարձր մաթեմատիկական գիտութիւն, վերջապէս կարողացաւ փաստել թէ էլեկտրականութիւնը եւ մագնիսականութիւնը երկու տարբեր դրսեւորումներն են մէկ առաւել լայն հասկացութեան, մի էներգիայի, որը այդ ժամանակւանից կոչւեց էլեկտրամագնիսականութիւն: Մակսուէլը իր յայտնի 4 մաթեմատիկական հաւասարութիւններով կարողացաւ գիտական բացատրութիւն գտնել մեր շրջապատում գտնուող, կարելի է ասել, բոլոր երեւոյթների համար:

Մակսուէլի 4 հաւասարութիւնները այսօր էլ կոչուում են նրա

անունով: Այս հաւասարութիւնների ամենահետաքրքիր եւ փայլուն բաժինը այն է, որ չնայած այն ժամանակ դեռ չէր ձեւաւորել մեծ գիտնական Ալբերտ Էյնշտէյնի յարաբերականութեան տեսութիւնը, այն ստեղծել է դրանից մօտաւորապէս 40 տարի յետոյ, սակայն Մակսուէլի հաւասարութիւնները լրիւօրէն համընկաւ յարաբերականութեան տեսութեանը: Առաւել եւս կարելի է ասել թէ այս հաւասարութիւնները դասական ֆիզիկայի միակ երեւոյթն է, որն առանց որեւէ ուղղումների օգտագործւում է նաեւ յարաբերականութեան տեսութեան մէջ: Էյնշտէյնի տեսութիւնները հրատարկելուց եւ ընդունւելուց յետոյ գիտնականներին յաջողեց այսպէս բացատրել Մակսուէլի հաւասարութիւնները, որ մագնիսականութիւնը ինքնին մի յարաբերական երեւոյթ է: Սակայն ամենափայլուն կէտը Մակսուէլի գործում այն էր, որ այս հաւասարութիւնները վճռելով նա հասաւ մի վերին աստիճանի հետաքրքիր իրականութեան: Այս հաւասարութիւնը համեմատելով ալիքների հաւասարութեան հետ, Մակսուէլը հասաւ այն եզրակացութեան, որ էլեկտրամագնիսական ալիքի արագութիւնը հաւասար է 300.000 կմ./վայրկեանի: Դա շատ ցնցիչ եւ անկիւնադարձային յայտնագործութիւն էր, քանի որ դա նոյնն էր, ինչ մինչ այդ գիտնականները գտել էին լաբորատորային պայմաններում: Այսպիսով Մակսուէլը էլեկտրականութիւն եւ մագնիսականութիւնը միաւորելուց բացի, նաեւ միաւորեց լոյսին պատկանող գիտութիւնը՝ օպտիկան: Էլեկտրամագնիսական ալիքը իւրաքանչիւր վայրկեանում 300.000 կմ. առաջ է ընթանում: Իսկ այս ալիքների երեւելի տեսքը մեր աչքի համար հէնց լոյսն է:

Բոլորս գիտենք թէ որեւէ առարկայ մեզ համար տեսանելի է դառնում այն ժամանակ, երբ

